# Արձանագրություն N 4

**ԵՐՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 22/17 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կաուստիկ սոդայի, ծծմբական թթվի, աղաթթվի ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի բացման նիստի վերսկսման և բանակցությունների վարման**

ք. Երևան 14 սեպտեմբերի 2017թ., ժ. 10:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գևորգյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Մուրադյանը

Վ. Գերոյանը

Ա. Վարդապետյանը

Բ. Հարությունյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանը

Նիստին մասնակցում էին նաև «Յունիքիմ» ՍՊԸ-ի լիազոր ներկայացուցիչ Վաղուժ Օհանյանը, և «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի տնօրեն Գուրգեն Մկրտչյանը:

Նիստի օրակարգը

1. ԵՐՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 22/17 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնում կատարելու գնահատող հանձնաժողովի կասեցված նիստը վերսկսելու մասին:
2. ԵՐՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 22/17 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հայտեր ներկայացրած մասնակիցների զբաղեցրած տեղերի մասին:
3. ԵՐՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 22/17 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հարց 1.

ԵՐՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 22/17 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնում կատարելու գնահատող հանձնաժողովի կասեցված նիստը վերսկսելու մասին:

Հանձնաժողովը վերսկսում է կասեցված նիստը՝ ՀՀ կառավարության 2017թ-ի մարտի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի համաձայն վարելով միաժամանակյա բանակցություններ 2-րդ չափաբաժնով ծծմբական թթվի համար ներկայացված գնային առաջարկների նվազեցման նպատակով:

Նիստին ներկա գտնվող երկու մասնակիցների ներկայացուցիչների միջև տեղի ունեցած բանակցություններում արձանագրվեց հետևյալը`

| Լոտերի համարները | Մասնակիցների կողմից մեկ միավորի համար առաջարկած գները ՀՀ դրամով | |
|---|---|---|
| | «Յունիքիմ» ՍՊԸ | «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ |
| 1-ին | 93,6 | 93,5 |
| 2-րդ | 93,0 | 92,9 |
| 3-րդ | 92,4 | 92,3 |
| 4-րդ | 91,8 | 91,7 |
| 5-րդ | 91,2 | Հրաժարվել է բանակցություններին հետագա մասնակցությունից |

Որոշեց`

«Յունիքիմ» ՍՊԸ-ի կողմից ԵՐՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 22/17 ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի 1կգ-ի համար առաջարկված գին սահմանել 91,2 (իննսունմեկ ամբողջ երկու տասնորդական) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն:

Ընդունվել է որոշում կողմ 5, դեմ 0:

Հարց 2

ԵՐՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 22/17 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հայտեր ներկայացրած մասնակիցների զբաղեցրած տեղերի մասին:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով մասնակիցների կողմից բոլոր երեք չափաբաժինների համար առաջարկած գները,

Որոշեց`

1.Ըստ չափաբաժինների տեղերը բաշխել հետևյալ կերպ:

| Գրաված տեղերը | Կազմակերպության անվանումը | Կազմակերպության առաջարկած գները այդ թվում ԱԱՀ |
|---|---|---|
| 1-ն չափաբաժին | | |
| 1-ին տեղ | «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ | 3 577 500<br>Երեք միլիոն հինգ հարյուր յոթանասունյոթ հազար հինգ հարյուր |
| 2-րդ տեղ | «Գ. Նազարյան և ընկերներ» ՍՊԸ | 5 248 800<br>հինգ միլիոն երկու հարյուր քառասունութ հազար ութ հարյուր |
| 3-րդ տեղ | «Յունիքիմ» ՍՊԸ | 6 075 000<br>վեց միլիոն յոթանասունհինգ հազար |
| 2-րդ չափաբաժին | | |
| 1-ին տեղ | «Յունիքիմ» ՍՊԸ | 3 283 200 |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Երեք միլիոն երկու հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր |
| 2-րդ տեղ | | «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ | 3 301 200<br>Երեք միլիոն երեք հարյուր մեկ հազար երկու հարյուր |
| 3-րդ տեղ | | «Գ. Նազարյան և ընկերներ» ՍՊԸ | 3 844 800<br>Երեք միլիոն ութ հարյուր քառասունչորս հազար ութ հարյուր |
| 4-րդ տեղ | | «ԹԱԳ ՀԷՍ» ՍՊԸ | 13 680 000<br>Տասներեք միլիոն վեց հարյուր ութսուն հազար |
| 3-րդ չափաբաժին | | | |
| 1-ին տեղ | | «ԹԱԳ ՀԷՍ» ՍՊԸ | 100 000<br>Մեկ հարյուր հազար |

2. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

- Սույն նիստի հաջորդ օրը www.gnumner.am կայքում հրապարակել հայտի բացման նիստի արձանագրությունը և շահերի բախման հայտարարությունը:
- Սույն նիստին հաջորդող աշխատանքային օրը ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել ըստ չափաբաժինների առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցումը:
- Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնելու սույն հրավերի 6-րդ հավելվածով սահմանված գլուխը և իր կողմից հաստատված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված 6.1-ը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հարց 3.

ԵՐՔԷԿ-ՇՀԱՊՁԲ 22/17 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

1. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

1.1. ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեից հարցման պատասխան եզրակացությունը և առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցներից էլեկտրոնային փոստով հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերն ստանալուն հաջորդող օրը դրանք տրամադրել գնահատող հանձնաժողովի անդամներին:

1.2. Վերը նշված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, ժամը 14:00-ին հրավիրել հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

ԾԱՆՈՒՑՈՒՄ – *Սույն արձանագրության հետ միաժամանակ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկվում է արձանագրությունն ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Գևորգյան

Անդամներ՝ Ս. Մուրադյան

Վ. Գերոյան

Ա. Վարդապետյան

Բ. Հարությունյան

Քարտուղար՝ Ա. Պետրոսյան